ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- մայիսի 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի №469Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի հունվարի 29-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ միջնորդելով կարգադրել, որ Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ տուգանք կիրառելու մասին» №469Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում) գործողության մեջ չմտնի մինչև խնդիրը վերանայելը և այդ մասին լրացուցիչ որոշում կայացնելը, ինչպես նաև վերանայել Որոշումը և վերացնել՝ անվավեր ճանաչելով այն: Ընկերությունը, նշելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, եզրահանգել է, որ Որոշումն անվավեր է, քանի որ այն ընդունվել է օրենքի խախտմամբ, այսինքն՝ որոշումն ընդունելիս հաշվի չեն առնվել բազմաթիվ փաստական հանգամանքներ և իրավական նորմեր, որոնց վերլուծության արդյունքում Հանձնաժողովն իրավաչափորեն կարող էր հանգել եզրակացության, որ Որոշմամբ արձանագրված հիմքով Ընկերությունը ենթակա չէ պատասխանատվության: Որպես բողոքի հիմնավորում ներկայացվել են.

ա. նշելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» և «գ» ենթակետերը, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետը, ինչպես նաև Հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի №414Ն որոշմամբ

հաստատված՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 9-րդ կետը, Ընկերության դիտարկմամբ,«Արփինետ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Արփինետ) անունից հանդես չի եկել տնօրենը, իսկ ենթադրյալ աշխատակիցը, ով ուղարկել է քննարկվող գրությունը, չի ներկայացրել համապատասխան լիազորագիր: Հետևաբար, ըստ Ընկերության, առկա պայմաններում կարելի է փաստել, որ Ընկերությունում Արփինետի անունից դիմում չի ստացվել, իսկ առկա նամակագրությունը չի կարող դիտարկվել և/կամ գնահատվել որպես Արփինետի դիմում: Ավելին, նշված էլեկտրոնային հաղորդագրությունն անգամ չի ուղղվել Ընկերության գլխավոր տնօրենին, իսկ Ընկերության միջօպերատորական համագործակցության բաժնի աշխատակցի՝ դիմումներ ստանալու և դրանց ընթացք տալու լիազորությունները նույնպես որևէ կերպ հաստատված չեն համապատասխան լիազորագրով: Միևնույն ժամանակ, Արփինետի աշխատակցի էլեկտրոնային փոստով ուղարկված նամակը չի համապատասխանում Կանոնների 9-րդ կետով սահմանված դիմումի գրեթե բոլոր պարտադիր պահանջներին, քանի որ գրության մեջ նշված չէ վարձակալության ժամկետը, որի վերաբերյալ իմպերատիվ պահանջը նախատեսված է Կանոնների 9-րդ կետում, գրությանը կից չեն ներկայացվել Ընկերության բանկային հաշվեհամարին վճարված տեխնիկական պայմանների առկայության ստուգման ծառայության համար վճարի անդորրագրի և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիայի պատճենները: Ուստի, Արփինետի աշխատակցի կողմից ներկայացված էլեկտրոնային գրությունը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և Ընկերությունը այդ գրությունը ուսումնասիրելու և դրան պատասխանելու պարտականություն չուներ: Կանոնների իմաստով դիմումը, որին պետք է պատասխանի գերիշխող օպերատորը, առհասարակ բացակայում է, իսկ քանի որ դիմում առկա չէ, ապա Ընկերությունը պարտավորություն չի կրում դրան ընթացք տալու և առավել ևս սահմանափակված չէ որևէ ժամկետով: Այդուհանդերձ, չնայած Արփինետի աշխատակցի թույլ տված բոլոր թերացումներին, Ընկերությունը

ժամանակ է հատկացրել և ուսումնասիրել է նրա ներկայացրած գրությունը: Ընկերության համապատասխան գործողությունները բացառապես բարի կամքի դրսևորումներ են, որի համար չի կարող տուգանվել, սակայն անարդարացիորեն կրում է իր բարեխղճության բացասական հետևանքները: Ընկերությունը, առանց այդպիսի պարտականություն կրելու, ձեռնարկել է Արփինետի դիմումին պատասխանելու գործողություններ այն դեպքում, երբ Արփինետը չի վճարել նույնիսկ տեխնիկական պայմանների առկայության ստուգման ծառայության համար: Այսինքն, Ընկերության գործողությունները կատարվել են անհատույց, ինչը նույնպես Հանձնաժողովը հաշվի չի առել: Ընկերության գնահատմամբ, Հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, որ Արփինետի կողմից ներկայացվել է հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմում, որին Ընկերությունը ընթացք է տվել, հետևաբար, դիմումի բավարարումը կամ մերժումը պետք է իրականացվեր Կանոններով սահմանված ժամկետում, անհիմն է և համահունչ չէ օրենսդրության պահանջներին: Հանձնաժողովի վկայակոչած դիրքորոշումից հետևում է, որ որևէ գրություն որպես վարձակալության դիմում որակելու համար բավարար հիմք է գերիշխող օպերատորի կողմից այդ գրությանն ընթացք տալը: Այսինքն, այդ դեպքում անտեսվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ դիմումին ներկայացվող պահանջները, որոնք կրում են իմպերատիվ բնույթ: Ստացվում է, որ Հանձնաժողովը գերիշխող օպերատորի հայեցողությանն է թողնում որոշումը, արդյո՞ք դիմումը համապատասխանում է օրենսդրությամբ սահմանված պահանջներին, թե՝ ոչ: Այդ պարագայում Կանոնների 9-րդ կետով սահմանված պահանջները որոշ չափով իմաստազրկվում են: Օպերատորի կողմից ներկայացված գրությունների՝ դիմում համարվել կամ չհամարվելը որոշվում է ոչ թե գերիշխող օպերատորի կողմից դրանց ընթացք տալով, այլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանությամբ: Բացի այդ, Կանոններում գերիշխող օպերատորին՝ տվյալ դեպքում Ընկերությանը, վերապահված չէ որևէ իրավունք՝ մերժելու Կանոններին անհամապատասխան, այն է՝ Կանոնների պահանջների խախտմամբ ներկայացված դիմումները,

բ. վկայակոչելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասը և Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի №341Ն որոշմամբ տրամադրված №60 լիցենզիայի պայմանների (այսուհետ՝ Լիցենզիա) 1-ին և 8.2 կետերը, Ընկերությունը պնդել է, որ անգամ եթե Արփինետի գրությունը համարվում է պատշաճ կերպով ներկայացված դիմում, ապա միևնույնն է, Ընկերությունը ենթակա չէ պատասխանատվության, քանի որ գործել է ֆորս մաժորի առկայության ներքո: Արփինետի գրությունը ներկայացնելու ժամանակահատվածը բնորոշվում է Ընկերության ղեկավար կազմի և ներքին գրագրության լեզվաբանական հենքի փոփոխությամբ, համաճարակի և ռազմական դրության պատճառով բազմաթիվ աշխատակիցների բացակայությամբ: Սույն դեպքում պատերազմը, համաճարակը և մյուս հանգամանքները հանդիսանում են ֆորս մաժոր, քանի որ դրանք արտակարգ և անկանխելի հանգամանքներ են, որոնք առաջացել են Ընկերության կամքից անկախ և խոչընդոտել են Ընկերության բնականոն գործունեությունը, և Ընկերությունը հնարավորություն չի ունեցել խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու պատերազմի, համաճարակի և մյուս հանգամանքների ազդեցությունը: Օրինակ, կորոնավիրուսը խոչընդոտներ է առաջացնում բոլոր աշխատակիցների սահմանված աշխատանքային ռեժիմով աշխատանքի ներկայանալու համար և հանգեցնում է նրանց անկանխատեսելի բացակայություններին, ինչն էլ կարող է առաջացնել կամ առաջացնում է պարտականությունների կատարման ձգձգումներ: Այսպիսով, թեև Ընկերության առջև ի հայտ են եկել պարտավորությունների կատարման բազմաթիվ խոչընդոտներ՝ ֆորս մաժոր, այնուամենայնիվ Ընկերությունը հնարավորինս սեղմ ժամկետներում արձագանքել է ոչ պատշաճ ձևով ներկայացված դիմումին,

գ. Ընկերությունը պնդել է, որ վարչական մարմինը, նախքան Ընկերությանը վարչական պատասխանատվության ենթարկելը, պարտավոր էր գործել վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 245-րդ հոդվածի պահանջներին համապատասխան. վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի խնդիրներն են՝ յուրաքանչյուր գործի հանգամանքները ժամանակին, համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելը, գործը օրենսդրությանը ճիշտ համապատասխան լուծելը,

ընդունված որոշման կատարումն ապահովելը, ինչպես նաև վարչական իրավախախտումների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները բացահայտելը, իրավախախտումները կանխելը, քաղաքացիներին օրենքները պահպանելու ոգով դաստիարակելը, սոցիալիստական օրինականությունն ամրապնդելը: Հանձնաժողովն Ընկերությանը պատասխանատվության ենթարկելիս պետք է կատարեր գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն և միայն համոզվելով, որ թույլ է տրվել իրավախախտում և առկա չէ այդ իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելուց ազատող որևէ հիմք, Ընկերությանն ենթարկեր պատասխանատվության.

2) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, որը տուժել է կարգավորողի որոշման արդյունքում, իրավասու է այդ որոշման հրապարակումից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, միջնորդել կարգավորողին, որպեսզի վերջինս վերանայի այդ որոշումը: Եթե նույն հոդվածի առաջին մասի համաձայն ներկայացվում է միջնորդություն, ապա կարգավորողը կարող է կարգադրել, որպեսզի խնդրո առարկա որոշումը գործողության մեջ չմտնի մինչև խնդիրը վերանայելը և այդ մասին լրացուցիչ որոշում կայացնելը և պարտավոր է վերանայման միջնորդության ներկայացումից հետո՝ 180 օրվա ընթացքում, հաստատել, փոփոխել կամ ուժը կորցրած ճանաչել այդ որոշումը կամ դրա ցանկացած մասը: Եթե նույն հոդվածի երկրորդ մասի 1-ին կետի համաձայն կարգադրություն չի արձակվում, ապա որոշումը շարունակում է գործել.

3) Լիցենզիայի 8.2 կետի համաձայն՝ լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են, իսկ 1-ին կետի համաձայն՝ ֆորս մաժորը արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են, որոնք ստեղծվել են լիցենզավորված անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են լիցենզավորված անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության

կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը.

4) Հանձնաժողովը, ուսումնասիրելով Ընկերության ներկայացրած հիմնավորումները, պարզաբանումներն ու դիտարկումները, հաստատված է համարում հետևյալը.

ա. Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- Կանոնների 10-րդ կետի համաձայն՝ գերիշխող օպերատորը, դիմումն ստանալու պահից 7 աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է ուսումնասիրել այն և լրացուցիչ շինարարական աշխատանքներ չպահանջվելու դեպքում օպերատորին տրամադրել տեխնիկական պայմաններ, կամ դիմումը մերժելու մտադրության դեպքում այդ մասին գրավոր տեղեկացնել օպերատորին և Հանձնաժողովին,
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե ծանուցումից և լսումներից հետո Հանձնաժողովը որոշում է, որ կարգավորվող իրավաբանական անձը չի կատարել իր լիցենզիայի կամ թույլտվության որևէ պայման կամ Հանձնաժողովի կանոնների կամ կանոնակարգերի որևէ դրույթ, ապա Հանձնաժողովն իրավասու է կարգադրել, որ իրավախախտ կարգավորվող անձը վճարի տույժ կամ տուգանք, որը առնվազն պետք է կազմի նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, սակայն չպետք է գերազանցի նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը,

բ. Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումների պահանջներին համապատասխան և այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Հանձնաժողովը գտնում է, որ ըստ էության, Արփինետի կողմից Ընկերությանը ներկայացվել է հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման դիմում, որին Ընկերությունը ընթացք է տվել, հետևաբար, դիմումի բավարարումը կամ մերժումը պետք է իրականացվեր Կանոններով սահմանված ժամկետում, ինչն Ընկերությունը չի իրականացրել՝ արդյունքում խախտելով Կանոնների 10-րդ կետի պահանջը, ինչի համար էլ ենթարկվել է պատասխանատվության,

գ. Ընկերությունը չի հիմնավորել Որոշմամբ որևէ իրավակարգավորման խախտման հանգամանքը, իսկ բողոքում նշված պնդումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

- Ընկերությունն իր 2020 թվականի դեկտեմբերի 10-ի №00378/20-И11 գրությամբ ընդունել է Կանոնների 10-րդ կետի պահանջների խախտումը: Ինչ վերաբերում է Ընկերության դիտարկմանն առ այն, որ Արփինետի աշխատակցի կողմից ներկայացված էլեկտրոնային գրությունը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պահանջներին, և Ընկերությունն այդ գրությունն ուսումնասիրելու և դրան պատասխանելու պարտականություն չուներ, ապա տվյալ պարագայում անհասկանալի են դրա քննարկման շրջանակում տեխնիկական պայմաններ տրամադրելու, իսկ հետագայում խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրումը մերժելու Ընկերության գործողությունները, այդ թվում՝ Հանձնաժողովին ուղղված Ընկերության 2020 թվականի նոյեմբերի 12-ի N0346/20-U11 գրությունը, որով հայտնել է, որ ի պատասխան Արփինետի գրության՝ խնդրո առարկա խողովակաշարը վարձակալության հիմունքներով տրամադրել չի կարող: Ընդ որում, այս կապակցությամբ ընդունվել է Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 9-ի №444Ա որոշումը՝ Ընկերության կողմից Արփինետին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման խնդրո առարկա նույն դիմումի մերժումն ընդունելու վերաբերյալ, որի առնչությամբ Ընկերությունը դրական դիրքորոշում է հայտնել իր 2020 թվականի դեկտեմբերի 10-ի №00378/20-И11 գրությամբ: Ավելին, նշված գործընթացի շրջանակում Ընկերությունն իր 2020 թվականի նոյեմբերի 20-ի №00360/20-И11 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Կանոնների 17-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթները (որի համաձայն՝ գերիշխող օպերատորը իրավասու է մերժել օպերատորի դիմումը, եթե Հանձնաժողովին ապացուցի, որ խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո երեք տարվա ընթացքում)՝ մերժել է Արփինետի պահանջը և Կանոնների համաձայն՝ տեղեկացրել Հանձնաժողովին,

Այս առումով, անհասկանալի է նաև Ընկերության դիտարկումը խնդրո առարկա դիմումի քննարկման շրջանակում բարի կամքի դրսևորման վերաբերյալ, քանի որ «բարի կամքը» չի կարող լինել կամայական, ավելին, դրա դրսևորումն անհասկանալի է՝ նկատի ունենալով խնդրո առարկա հարցի շրջանակում Ընկերության կողմից տեխնիկական պայմանների տրամադրումն ու հետագայում խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման մերժումը,

- Ընկերության ներկայացրած՝ ֆորսմաժորային իրավիճակին վերաբերող դիտարկումների առնչությամբ պետք է փաստել, որ Ընկերությունը, ինչպես նախքան Որոշման կայացումը, այնպես էլ սույն վարույթի շրջանակում, որևէ կերպ չի հիմնավորվել քննարկվող պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար: Մինչդեռ Ընկերությունը չի հիմնավորել իր թվարկած հանգամանքների ուղղակի առնչությունը Կանոնների 10-րդ կետով ամրագրված պարտավորության կատարման անհնարինության հետ, նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը ձեռնարկելու հանգամանքը,
- Ընկերությունը, որպես Որոշումն անվավեր լինելու, օրենքի խախտմամբ այն ընդունված լինելու և Հանձնաժողովի կողմից այն վերանայելու իրավական հիմք նշելով օրենսդրության մի շարք հոդվածներ, որևէ կերպ չի հիմնավորել (չի

նշել որևէ կիրառելի օրենքի դրույթ) Որոշման ընդունմամբ հիշյալ իրավակարգավորումների խախտման հանգամանքը, որով նաև հիմնավորվում է Հանձնաժողովի կողմից մինչև Որոշման վերանայումը Որոշումը գործողության մեջ չմտնելու վերաբերյալ կարգադրություն չարձակելու հանգամանքը: Ավելին, Ընկերության մատնանշած՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 245-րդ հոդվածը Հանձնաժողովի գործունեության նկատմամբ կիրառելի չէ, քանի որ էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում կարգավորվող անձանց պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ իրավակարգավորումներն ամրագրված են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքով, որով էլ տվյալ դեպքում առաջնորդվել է Հանձնաժողովը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածը Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հաստատել Որոշումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2021թ.